Հաստատում եմ

Տնօրեն՝ Ս.Արշակյան 30.08.22թ.

ՋՈՐՋ ԴՈՒՆԱՅԱՆՑԻ ԱՆՎԱՆ Հ 154 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

1Ա

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ԴԱՍՎԱՐ՝ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ Լ.Ս.

2022– 2023 ՈՒՍՏԱՐԻ

ԴԱՍԱՐԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1ա դասարանում սովորում է 35 աշակերտ , որից 21 աղջիկ և 14 տղա: Իմ նպատակն է՝ ձևավորել կարգապահ, կազմակերպված և կուռ կոլեկտիվ, սերմանել համամարդկային արժեքներ, նպաստել ինքնուսուցման կարողությունների ձևավորմանը; Աշակերտները լինեն համախմբված, աշխատասեր,հանդուրժող ,ընկերասեր և ունենան ուսման նկատմամբ պատասխանատվության զգացում:

Դպրոց ընտանիք կապը

1. Ծնողներին մասնակից դարձնել ուսումնադաստիարակչական աշխատանքներին:
2. Ապահովել ուսուցիչ –ծնող –աշակերտ կապը:
3. Անցկացնել ծնողական ժողովներ, անհատական զրույցներ:

Ուսումնադաստիարակչական նախատեսված աշխատանքները ուսումնական տարվա ընթացքում.

- Կահավորել և ձևավորել դասասենյակը:
- Հետևել դասասենյակի և շրջապատի մաքրությանը:
- Ուշադրություն դարձնել աշակերտների հագուստին:
- Դասարանում սահմանել հերթապահություն:
- Աշխատանք տանել աշակերտների ուսման առաջադիմության բարձարացման ուղղությամբ :
- Սեր և հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ:
- Ապահովել դասղեկ –ուսուցիչ –աշակերտ –ծնող կապը:
- Սեր արթնացնել ընթերցանության նկատմամբ, կապ պահպանել գրադարանի հետ:
- Ուշադրություն դարձնել աշխատանքային դաստիարակությանը:
  - Ամեն կերպ օգնել և աջակցել ետ մնացող աշակերտներին:
  - Ստեղծել փոխադարձ հարգանք միմյանց նկատմամբ:
  - Ստեղծել և ձևավորել համերաշխ աշակերտական կոլեկտիվ:
  - Աշխատանք տանել հաճախակի ուշացող և բացակայող աշակերտների հետ: Հնարավորինս հասնել այդ երեվույթի վերացմանը:
  - Ուշադրություն դարձնել աշակերտների սանիտարահիգենիկ վիճակին:
  - Ակտիվորեն մասնակցել դպրոցի հասարակական աշխատանքներին:
  - Կազմակերպել դաստիարակչական, ճանաչողական էքսկուրսիաներ:

ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Կատարել աշակերտների հաճախումների հաշվառում:
- Հետևել աշակերտների արտաքին տեսքին:
- Հետևել աշակերտների անձնական հիգիենային:
- Հետևել աշակերտների սնվելուն ու բարեկիրթ վարքին:
- Հետևել դասասենյակի մաքրությանը ՝ ըստ նախապես կազմված հերթապահության գրաֆիկի:
- Ստուգել օրագրի, դասագրքերի և տետրերի առկայությունը ըստ դասացուցակի:
- Հետևել, որ աշակերտները դասամիջոցներին <u>չքաշվեն, չվազեն և չհրմշտեն</u> իրար:

- Հնարավորինս կանխել ուշացումներն ու անհարգելի բացակայությունները:

ԱՄԵՆՇԱԲԱԹՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Էլ.մատյանի վարման վերահսկողություն:
- Դասղեկի ժամի վարում, պլանավորված զրույցների անցկացում:
- Հետևել աշակերտների առաջադիմությանը, զրուցել նրանց և նրանց ծնողների հետ:
- Լսել չառաջադիմող աշակերտներին և համապատասխան որոշում –ներ կայացնել:
- Զրուցել անհարգելի բացակայող և հաճախակի ուշացող աշակերտ –ների և նրանց ծնողների հետ:
- Ըստ գրաֆիկի հերթապահության կազմակերպում սրահում:

ԱՄԵՆԱՄՍՅԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակնե –րում, խորհուրդներում և ակումբներում:
- Զրուցել դասավանդող ուսուցիչների հետ աշակերտների վարքի և առաջադիմության մասին:
- Ծնողներին տեղեկացնել իրենց երեխաների ստացած գնահատա –կանների մասին:
- Լսել դասարանի ավագի հաշվետվությունը:
- Լավ սովորող աշակերտների միջոցով օգնել թույլ աշակերտներին ՝ բարձրացնելու առաջադիմությունը:
- Կազմակերպել դասարանին հատկացված դպրոցամերձ տարածքի մաքրումը:
- Հանդիպել ներառական կրթության մեջ ներգրավված աշակերտների ծնողների և հատուկ

մանկավարժների հետ:

ԿԻՍԱՄՅԱԿԻ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Կիսամյակի ամփոփում:
- Կիսամյակային հաշվետվության հանձնում:
- Ծնողական ժողով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՎԵՐՋՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Տարեկան գնահատականների և դաստիարակչական աշխատանքների ամփոփում:
- Ծնողական ժողով:
- Տարեկան հաշվետվության հանձնում
- Դասագրքերի վերանորոգում և հանձնում գրադարան:
- Դասասենյակի մաքրում և հանձնում:
- Աշակերտական ակտիվի, ծնողների, հնարավոր է նաև զուգահեռ դասարանի հետ համատեղ կազմակերպել դասարանի ամառային էքսկուրսիան:
- Ավարտել մատենավարություն:

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

- ☐ <u>ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Դասարանում ստեղծել լավ մթնոլորտ: Սովորեցնել հարգել միմյանց, լինել ազնիվ, ճշտախոս, պատասխանատու, միշտ պատրաստ օգնելու ընկերոջը: Սովորեցնել Աստծո *10* պատվիրանները և ուղղություններ տալ՝ կյանքում դրանք ճիշտ կիրառելու:
- ☐ <u>ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Հաճախակի կազմա–կերպել էքսկուրսիաներ և այցելություն թանգարաններ, կազմակեր–պել տարիքային կինոդիտումներ և ներկայացումների դիտումներ, դրանք քննարկել և վերլուծել:
- ☐ <u>ՌԱԶՄԱ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> –Անցկացնել զրույցներ հայրենասիրական թեմաներով, սեր արթնացնել դեպի հայրենիքը, ծանոթացնել մեր հերոսներին, կազմակերպել էքսկուրսիա դեպի Սարդարապատ, Ծիծեռնակաբերդ, «Հաղթանակ» զբոսայգի:
- ☐ <u>ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Զրույց՝ «առողջ մարմնում

առողջ հոգի» թեմայով: Հետևել աշակերտների մասնակցությանը ֆիզկուլտուրայի դասերին, համադպրոցական և միջդասարանային սպորտային միջոցառումներին:

- ▭ <u>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Դասարանում պահ –պանել մաքրություն, կարողանալ գնահատել իր և ընկերոջ կատա –րած աշխատանքը, պահպանել և անհրաժեշտության դեպքում վերանորոգել գույքը: Ձևավորել բարեխիղճ վերաբերմունք դեպի աշխատանքը:
- ▭ <u>ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</u> – Մաքուր պահել շրջակա միջավայրը: Գարնանը մասնակցել շաբաթօրյակներին և ծառատունկին: Անցկացնել զրույց «Ես սիրում եմ բնությունը» թեմայով:
- ▭ <u>ԴՊՐՈՑ –ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊ</u> – Ապահովել դպրոց –ընտանիք կապը՝ օրագրի միջոցով: Շաբաթվա վերջում ստուգել օրագրերը և նշումներ կատարել: Հանդիպումներ կազմակերպել դասավանդող ուսուցիչ –ների և ծնողների միջև: Հատկապես մեծ ուշադրություն դարձնել չառաջադիմող աշակերտներին և կապ պահպանել նրանց ծնողների հետ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
	Ընդունել դասարանը: Երեխաներին ապահովել դասագրքերով: Զրուցել գիտելիքի օրվա մասին, կարևորել դպրոցն ու կրթությունը:		Դասվար
I	Դպրոցը և մենք: Աշակերտներին ծանոթացնել իրենց պարտականություններին: Խոսել վարքիկանոնների մասին: Կարևորել ուսուցման ճիշտ կազմակերպման անհրաժեշտությունը:		Դասվար
II	Զրույց նվիրված ՀՀ Անկախության 31 ամյակին:Երգել ՀՀ օրհներգը:		Դասվար
III	Հանդուրժողականություն. Սովորողներին ներկայացնել փոքրիկ պատմություն, որտեղ խրախուսվում է հանդուրժողականությունը: Անցկացնել զրույց գրադարանի,գրադարանավարի և նրանց կարևորության մասին:		Դասվար
IV	Կիրթ և քաղաքավարի պահվածք. Կծանոթանան վարվելաձևի կանոններին:		Դասվար
V	«Ես թողնում եմ մանկական խաղերը և գնում եմ գիտության լույսը»: Կգիտակցեն Մեսրոպ Մաշտոցի կատարած գործի կարևորությունը:		Դասվար
VI	«Մենք սովորում ենք հայերեն տառերը»:Կծանոթանան հայոց գրերի ստեղծման պատմությանը:		Դասվար
VII	Հայոց տառեր, հայ զինվորներ: Կգիտակցեն լեզվի դերը ազգապահպանության գործում:		Դասվար
VIII	Տարվա եղանակներ: Զրուցել բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին: Զրույց «Ոսկեծամիկ աշուն» թեմայի շուրջ:		Դասվար
IX	Մեր պարտավորությունները: Կիմանան իրենց առջև դրված պարտավորությունները, կսովորեն պատասխանատու լինել յուրաքանչյուր արարքում: Անցկացնել զրույց քաղաքամայր Երևանի, նրա հիմնադրման մասին:		Դասվար
X	«Մաքուր պահիր շրջապատդ»: Օրինակներով ուշադրություն հրավիրիր շրջապատող երևույթների վրա:		Դասվար

XI	«Անվտանգ երթևեկության» կանոնների ուսուցում և ամրապնդում:Իրավիճակային պատմության վերլուծություն: «Անվտանգ երթևեկության» վերաբերյալ մուլտֆիլմի դիտում:		Դասվար
XII	Զրույց ընկերասիրության մասին:		Դասվար
XIII	Ամանորի նախապատրաստում, տոնական բացիկների պատրաստում:		Դասվար
XIV	Դաս-միջոցառում նվիրված Ամանորին և Սուրբ ծննդին:		Դասվար
XV	Բանակը հայրենիքի սիրտն է:		Դասվար
XVI	Հայրենասիրություն.խրախուսել հայրենիքի հանդեպ սերը և մեծ պատասխանատվությունը:		Դասվար
XVII	Մեր մանկագիրը՝ Հովհաննես Թումանյան: Կծանոթանան Հ. Թումանյանի հեքիաթներին:		Դասվար
XVIII	Գիրք նվիրելու օր: Գիրքը գիտելիքի աղբյուր է: Անաղարտ պահել մայրենի լեզուն:		Դասվար
XIX	«Իմ իրավունքները»: Զրուցել աշակերտների իրավունքների մասին:		Դասվար
XX	«Դռները բացեք գարուն է գալիս»:		Դասվար
XXI	«Մա'յր իմ, թանկագին»: Կպատրաստեն բացիկներ մայրիկների համար:		Դասվար
XXII	Հեքիաթի աշխարհում: Կլսեն հեքիաթ, կխոսեն չար և բարի արարքների մասին:	16.03.2023թ.	Դասվար
XXIII	Եկեղցական տոներ: Սուրբ Զատիկ		Դասվար
XXIV	Ընթերցել հատվածներ «Մանկական աստվածաշնչից»Կծանոթանան նաև առակներին:		Դասվար
XXV	«Ժամանակը ոսկի է»: Ինչպես խնայել ժամանակը:		Դասվար
XXVI	«Աշխատանքը մայրի է բոլոր բարիքների»: Կգիտակցեն աշխատանքի կարևորությունը:		Դասվար
XXVII	Մենք հասարակության մի մասնիկն ենք:		Դասվար
XXVIII	«Ուս ուսի որ տանք սարեր շուռ կտանք»: Կզարգացնենք ընկերասիրություն և հայրենասիրություն:		Դասվար
XXIX	Մայիսը հաղթանակների ամիս է: Զրուցել մայիսյան հաղթանակների, մեր հերոսների մասին:		Դասվար
XXX	«Ես մեկ տարով էլ մեծացա»: Ավարտվեց ուսումնական տարին: Հանձնարարություններ ամառային արձակուրդների համար:		Դասվար

ԴԱՍՎԱՐԻ ԺԱՄԵՐԻՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ

ԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

N	Թեմա	Կատարող Անձ	Կատարման ժամկետը	Կատարման մասին	Նշումներ
1.	Գիտելիքի օր.Դպրոցը մեր տունն է	Դասվար, աշակերտ	սեպտեմբեր		
2.	Եկեք ծանոթանանք	Դասվար, աշակերտ	սեպտեմբեր		
3.	Կարգապահական կանոններ	Դասվար, աշակերտ	սեպտեմբեր		
4.	Անկախ Հայաստան	Դասվար աշակերտ	սեպտեմբեր		
5.	Դպրոցի դերը և նշանակությունը	Դասվար աշակերտ	սեպտեմբեր		
6.	Սիրելի ուսուցիչ	Դասվար աշակերտ	հոկտեմբեր		
7.	Իմ Երևան	Դասվար աշակերտ	հոկտեմբեր		
8.	Աշնանը բնությունը և կենդանիները	Դասվար աշակերտ	նոյեմբեր		
9.	Չվող և մնացող թռչուններ:	Դասվար աշակերտ	նոյեմբեր		
10.	Ինչպե՞ս հոգ տանել կենդանիների մասին ձմռանը	Դասվար աշակերտ	նոյեմբեր		
11.	Ընկերության հիմքը	Դասվար, աշակերտ	նոյեմբեր		
12.	Բարեկամությունը սկսվում է ժպիտից	Դասվար, աշակերտ	դեկտեմբեր		
13.	Մեր իրավունքները	Դասվար, աշակերտ	դեկտեմբեր		

14.	Մեր պարտականությունները	Դասվար, աշակերտ	դեկտեմբեր		
15.	Ամանորյա հրաշքներ: Սուրբ Ծնունդ	Դասվար, աշակերտ	դեկտեմբեր		
16.	Հայ զինվոր	Դասվար աշակերտ	հունվար		
17.	Հարգանք և հանդուրժողականություն միմյանց նկատմամբ	Դասվար աշակերտ	փետրվար		
18.	Համակարգիչն ընկեր է, թե թշնամի	Դասվար աշակերտ	փետրվար		
19.	Գիրք նվիրելու խորհուրդը	Դասվար աշակերտ	փետրվար		
20.	Ինչպե՞ս հարթել կոնֆլիկտները	Դասվար աշակերտ	փետրվար		
21.	Բնությունը զարթնում է	Դասվար աշակերտ	մարտ		
22.	Իմ անգի՛ն մայրիկ	Դասվար աշակերտ	մարտ		
23.	Մաքուր պահենք մեր միջավայրը	Դասվար աշակերտ	մարտ		
24.	Աշխարհը գեղեցկացնում են մայրերը	Դասվար աշակերտ	ապրիլ		
25.	Սուրբ Զատիկ	Դասվար աշակերտ	ապրիլ		
26.	Օրվա ռեժիմ և առողջություն	Դասվար աշակերտ	ապրիլ		
27.	Աշխատանքը գեղեցկացնում է մարդուն	Դասվար աշակերտ	ապրիլ մայիս		
28.	Մայիսյան տոներ	Դասվար աշակերտ	մայիս		
29.	Ի՞նչ տվեց մեզ դպրոցը այս մեկ տարում	Դասվար աշակերտ	մայիս		
30.	Ինչպե՞ս պահենք մեզ բնության գրկում	Դասվար աշակերտ	մայիս		